Պապին ցոյց տալու համար է գրել այդ նամակը, թէեւ մոռանում է, որ քիչ վերեւում նոյն Աղէքսանդր կաթողիկոսի մասին ինքն ունի հետեւեալ տողերը. «Սա ինքն Աղէքսանդր յառաջ քան զնստել իւր յաթոռ հայրապետութեան, ունէր ընդդիմութիւն առ քաղկեդոնականս եւ առ Աթոռն Հռովմայ եւ գրեալ իսկ էր գիրք մի փոքրիկ հակառակ բանիւք»:

Այսպիսի սխալ եզրակացութեան մեր պատմագիրը յանգում է մէկ նրա համար, որ իսկապէս ինքը կ'ուզենար Ամենայն Հայոց Հայրապետութիւնը ենթարկուած տեսնել Հռոմի Պապերին: Մէկ էլ՝ որ նամակում կան — ինչպէս ասացինք — մի շարք քաղաքավարական խօսքեր եւ արտայայտութիւններ. ինչպէս՝ «երիցս երջանիկ տիեզերական հայրապետ, պետական գլուխ, գերիշխանական մեծութիւն, գերագոյն նախագահութիւն, հայր հասարակաց քրիստոնէից, անչիջելի ջահ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ» եւայլն (եր. 749): Բայց խոհեմաբար լռում է նամակի բուն նիւթի մասին, որ էր անշուշտ՝ սանձահարել միսիոնարներին, որոնք ամէն խայտառակութիւն թոյլ էին տալիս իրենց Հայաստանում եւ հայ ժողովուրդի նկատմամբ:

«Փարոս»ի մէջ տպագրուած նամակը բաց է անում քօղը եւ պարզաբանում գրութեան խոկական շարժառիթները: Հայոց կաթողիկոսը պայծառ գոյներով նկարագրում է քարոզիչների դատապարտելի արարքները եւ այն վնասները, որ նրանք հասցնում են քրիստոնէական կրօնին ընդհանրապէս, սերմանելով խռովութիւններ ու երկպառակութիւններ եւ դրդուելով թուլամիտների հաւատը: Հայոց եկեղեցու համառօտ դատանութիւնը տալուց յետոյ՝ կաթողիկոսը վերջացնում է նամակը այս խօսքերով.— Եթէ դու սրանից յետոյ էլ կը շարունակես համարել հայերին հերձուածող՝ դա քո կամքն է. իսկ եթէ ոչ՝ ապա խնդրում ենք նամակով ներշնչել քարոզիչներին յետ կենալու այն չար գործերից, որոնք ամենեւին չեն վայելում քո սրբազան անունը: Եթէ Քրիստոսի սիրոյ համար դու ցոյց կը տաս մեզ այդ շնորհը, բարեհաճիր քո նամակն ուղարկել մեզ, որպէսզի ներկայացնենք քարոզիչներին եւ թերեւս նրանք յետ կենան դէպի քրիստոնեաները տածած իրենց ատելութիւնից: Բայց ի հարկէ, նամակը մնաց անպատասխան (Եղեան, նոյն, 27):

Սրանով մենք չենք ուզում ժխտել պատմական այն իրողութիւնը, որ հայ եկեղեցականներից, մասնաւորապէս հայոց կաթողիկոսներից ոմանք յիրաւի ձգտել են բարեկամութեան կաթոլիկ եկեղեցու հետ, դեռ Ռուբինեանց օրերից սկսած: Ցայտնի են, զոր օրինակ, Ներսէս Լամբրոնացու, Գրիգոր Վկայասէրի, Գրիգոր Տղայի, Յովհաննէս Մեծաբարոյի, Կոստանդին Բարձրաբերդցու եւ այլոց փորձերը: Դեռ աւելին. Գրիգոր Է. Անաւարզեցի կաթողիկոսն այնքան առաջ գնաց այդ ուղղութեամբ, որ մինչեւ իսկ համաձայնեց որոշ փոփոխութիւններ կատարել հայոց եկեղեցու ծէսերի մէջ՝ այդ բարեկամութիւնը գլուխ բերելու համար1): Թէպէտ այդ բոլոր փորձերն էլ անյաջող անցան եւ հայ ժողովրդի բուռն ընդդիմութեան հանդիպեցին, բայց եւ այնպէս փաստը մնում է իրրեւ փաստ:

Սակայն պիտի ընդգծել, որ այդ փորձերի բուռն շարժառիթը բնաւ այն չէ, ինչ որ սովորաբար ներկայացնում են կաթոլիկ պատմագիրները, որոնց թւում նաեւ Հ. Զամչեանը.— որ իբր թէ Լուսաւորչական հայերը դգալով, որ իրենց եկեղեցին հերձուածող է եւ ուղղափառ դաւանութիւնից չեղուած, ցանկանում էին ուղղափառ եկեղեցու գիրկը դառնալ եւ երկնքի արքայութեան դռները բաց անել իրենց առջեւ: Ո՛չ: Իսկական շարժառիթն ուրիշ էր. այդ բարեկամութիւնը հայութեան կողմից երբեք չի հասկացուել եկեղեցիներից մէկն ու մէկի — ներկայ դէպքում՝ հայոց եկեղեցու — ձուլման, միութեան մտքով: Նա անհրաժեշտ է համարուել նախ եւ առաջ քրիստոնէական 2 քոյր եկեղեցիների համերաշխութեան տեսակէտից, եւ ապա, որ եւ ամենից գլխաւորն է, հայ ժողովրդի քաղաքական շահերի տեսակէտից: Դա հարկաւոր էր Արեւմուտքի օգնութեամբ Ռուբինեանց փոքրիկ անկախութիւնը ամէն կողմից տեղացող մահմեդական հարուածներից պաշտպանելու համար:

---

1) Կ. Թումայեան «Պատմ. Արեւել. խնդրոյ եւ առաջնորդ հայկ. հարցի», Լոնտոն, 1905 թ. Ա., 350–352: